ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Վախթանգ Բաբայանը, Նորայր Մելքումյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Արտակ Ստեփանյան, Սիրաք Ռաֆայելյան, Սերյոժա Ավալյան, Հակոբ Մարտիրոսյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը**

**Նիստը արձանագրում էր ՝ Արտակ Ստեփանյանը**

Լսեցին
***ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/*

Ղեկավարվելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց և կազմակերպությունների համար սահմանել հողի հարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

| Հ/Հ | Հարկատուի անուն, ազգանուն | Հողի / գույքի գտնվելու հասցեն | Մայր գումար ՀՀ դրամ | ՏույժՀՀդ րամ |
|---|---|---|---|---|
| 1. | Աղավարդ Հովհաննիսյան | ք. Ճամբարակ | 167.900 | 34.554 |
| 2. | Սամվել Խաչատրյան | ք. Ճամբարակ | 30.700 | 41.169 |
| 3. | Լևոն Ստեփանյան | գ. Թթուջուր | 18.300 | 14.895 |
| 4. | Ռադիկ Հարությունյան | գ. Թթուջուր | 14.500 | 13.754 |
| 5. | Վազգեն Վարդանյան | գ. Թթուջուր | 28.000 | 27.921 |
| 6. | Խաչիկ Մկրտչյան | գ. Վահան | | 7.206 |
| 7. | Սերոժ Այունց | գ. Գետիկ | 124.000 | 51.462 |

***<u>Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>***

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լսեցին

***ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝**

1. Հաստատել Ճամբարակի համայնքապետարանի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝

1. Արտակ Ստեփանյան-համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

հանձաժողովի քարտուղար՝

2.Նարգիզ Ապրեսյան-համայնքապետարանի աշխատակից

անդամներ՝

3.Նելլի Սարգսյան-մանկաբույժ

4.Շուշան Մխիթարյան-Ճամբարակի ՀՄՏԿ

5.Տեր Երեմիա Սարգսյան-Ճամբարակ տարածաշրջանի հոգևոր հովիվ

6.Ոսկի Շուշանյան-ՀԿ ներկայացուցիչ

7.Նազելի Մխիթարյան–Ճամբարակի ՄՏԳ տեսուչ

8. Լիաննա Մարտիրոսյան-Վահանի դպրոցի տնօրեն

2.Հաստատել Ճամբարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021թ. աշխատանքային ծրագիրը /Հավելված 1/:

3.Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ավագանու 19.01.2018թ. N 6 և 19.09.2019թ. N 67 որոշումները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լսեցին

*ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԵՆԻԿ*

**ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԵՐՅՈԺԱ ԱՎԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14 պրիմ 3 հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ, 18.05.2006թ. N 915-Ն որոշման 33-րդ կետով և հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի բնակիչ Բենիկ Սահակյանի դիմումը, Ճամբարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոց 21/31 հասցեում գտնվող 05-002-0102-0090 կադաստրային ծածկագրով 0.002797 հա համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի հողատարածքում /վկայական 29042014-05-0009/ իր կողմից ինքնակամ կառուցված 26.14 քմ ներքին և 29.25 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ճամբարակ համայնքի Գ. Նժդեհի փողոց 21/31 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հաdիսացող 0.002797 հա հողամասի վրա Ճամբարակ համայնքի բնակիչ Բենիկ Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված 29.29 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը ճանաչել համայնքային սեփականություն՝ հետագայում իրեն օտարելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***<u>Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>***

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լսեցին

***ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների.

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝**

1. Հաստատել Ճամբարակ համայնքի 2021թ. բյուջեն՝ համաձայն N 1 հավելվածի՝
ա) եկամուտների մասով՝ 468558.4 հազար դրամ
բ) Ծախսերի գծով՝ 401609.4 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամուտների՝ համաձայն հատված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
6.«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

***Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.***

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լսեցին

***ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 25.12.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու՝ 25.12.2020թ. թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԵՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.***

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ ________________

*Նիստն արձանագրեց՝* **Արտակ Ստեփանյանը**

________________________________